Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի <<Ֆիզիկա>> (8 դասաժամ), <<Ֆիզկուլտուրա>> (16 դասաժամ), <<Ինֆորմատիկա>> (18 դասաժամ) և <<Տեխնոլոգիա>> (3 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության 2025 թվականի օգոստոսի 22-ից սեպտեմբերի 04-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը կկայանա 2025 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 14:00 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի <<Բամբակաշատի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ -ում:

Տեղեկությունների համար զանգահարել 093-82-08-97: